

պապէն մկրտուեցաւ . բայց աւելի հաւանականը աս է որ Խրսերիոս կեսարացին զինքը մահուան անկողնոյն մէջ մկրտեց : Ա'լսեն թէ անոր համար մկրտութիւնը ուշացուցեր է , որովհետեւ կ'ուզէ եղեր {Յորդանան մկրտուիլ : } ահուան միջոցը բոլոր երեխայի ձերմակ զգեստ հագած էր : Ա երջապէս երեսուն տարի ժագաւորելէն վերջը մեռաւ 337-ն մայիսի 22-ն : Ա'լսէն մարդար ալ խրկեր էր որ Կոստանդը կանչեն . բայց անիկայ չկրցաւ ատենին հասնիլու հօրն աշքերը գոցել : Կոստանդիանոս՝ կտակը քահանայի մը յանձներ էր , զինքը երդունցըներով որ Կոստանդէն զատ մէկու մը ձեռք չտայ :

Ա'լարմինը ոսկիէ դագաղի մը մէջ զրած , ու ծիրանիով վրան ծածկած , ամբողջ բանակով մը Կոստանդնուազլիս բերուեցաւ : Ա'լթը որ պալատին գլխաւոր սրահին մէջ կեցաւ , վրան կայսերական վերարկուն դրած , գլուխն ալթագը , ու չորս կողմը ոսկիէ աշտանակներով ձրագներ վառած :

Երբոր Կոստանդ հասաւ , մեծ հանդէսով մարմինը առաքելոց եկեղեցին տարուեցաւ , ու հոն մասնաւոր գերեզմանի մէջ թաղուեցաւ , որն որ երկայն ատեն իր ընտանեացը և յաջորդներուն գերեզմանն եղաւ :

Ա'լեւելքի Ա'լեմուտքի զօրքերն հրատարակեցին որ Կոստանդիանոսի զաւկրներէն զատ ուրիշ մարդ կայսր չեն ձանցնար :

Կոստանդիանոս կայսերութեան զահը փոխադրելով և քաղաքական , ու կրօնական բաները կարգաւորելով պէտք էր որ ապագայից համարմանն ու սիրոյն արժանի ըլլար : Վրիստոնեայք , կ'ըսէ Շինարարն , այս եկեղեցւոյ ազատարարին ամենայն դիւցազնական գովեստ տուին : Ը աս մը անձնական ու մտաւորական ձիրքերով զարդարուած էր : Բարձրահասակ էր , շարժուածքը վսեմ , ու գէմքը վայելոււ : Իր գործունէութեամբը , չափաւորութեամբն ու անլունջութեամբը մեծ անուն ձգեց :

Պատմութեանց մէջ նէծն մակա-


նուամբ կը յիշուի , հաւանականաբար իր յաղթութեանցը , և մեծ քաղքի մը հիմնագիր ըլլալուն համար : Ը ատեւկեղեցւոյ հարք իր քրիստոնէական առաքինութիւնները պայծառացուցին , և տեղ տեղ իբրև սուրբ զինքը մեծարեցին :

Կը շարունակուի :

Արծիւ ճովոր ու Բասդրնակ :

Դավու արծիւն որ Մայիս ալ կ'ըսուի , ինչուան ութը հարիւր լիպրէ կրնայ կըշուէլ , ու ընդհանրապէս Ովկիանոսի ու Միջերկրականի տաք և բարեխառն գոտիներուն տակ կը գտնուի , և շատ քիչ կ'ըլլայ որ Խրոպայի հիւսիսային կողմերը մօտենայ : Իրեւթէ բոլոր տարին՝ Խրցայի ծովեզերքները կըպտրտի . ու շատ անգամ Խրիպտոսի ափանցը վրայ տեսնուած է . բայց ընդհանրապէս արեադարձներուն տակ աւելի մեծ կ'ըլլայ , ու ամէն տեղ ալ միշտ խոր ու տղմուտ տեղեր կը վնտուէ , և կակդամիս կենդանիներով ու մանր ձկներով կը կերակրուի :

Ա'լարմինը շիտակ ու սկաւառակի ձեռվ է , կոնըկին միջավայրը մոխրագոյն է , ու երկու կողմերը քիչ մը աւելի բաց . փորը միակերպ գորշախայտ է , գլուխը բարձր , քիթը երկայն , աչուշները մեծ ու դուրս ելած են . աշքին չորս դին կանանց մնխրագոյն , իսկ բիբը սև : Լ անջական լողալու թեւերը շատ վարով են . սկոչը երկայն ու արագաշարժէ և բոլոր մարմնէն երկու անգամ աւելի երկայն : Իր կաշին՝ կաշուն ու կարծր է . ակռաները տափակ ու մէջտեղը մէկ կարգի վրայ շարուած են , իսկ երկու կողմերը երեք ակռայ քովէ քով վեցանկիւնի ձեռվ են : Իր ընդարձակ լանջական թեւերը պարզած ատենը գիշակեր թունոյ մը նմանութիւն կը բերէ , որով արծուի մը գաղափար կու տայ . և ասկէց է որ ծառաւ աբժեկուեր է :



Րայց՝ ի իրեն արտաքոյ կարգի կերպարանքէն, այս ձուկս այնպիսի զէնք մը ունի որ մասնաւոր ուշադրութեամբ դիտելու արժանի բան է : Իր պոչին ու անոր տակը եղած պղտի թևակին մէջ տեղը սուր ասեղ մը ունի որ իրաւցընէ սարսափելի է : Լոյս ասեղս սաստիկ կարծր ու մեծ է . երբեմն 4, 5 բժաշափ երկայնութիւն կ'ունենայ, և երբեմն ալ աւելի մեծ, միշտ պոչին ուղղութքն է : Լոյս ասեղիս ծայրը ճերմակ է, վարի կողմը կապուտ, իսկ երկու կողմերն ալ սուր ու ակռայի ձեռվ դէպ՝ ի վար ծռած են : Լոյս ասեղս իր որոշեալ ժամանակին տարուէ տարի կը փոխուի, ու տեղը ուրիշ մը կը յաջորդէ :

Լոյս իր պաշտպանողական զէնքովը պատսպարուած՝ աներկիւղութեամբ մը ալեաց մէջ ժուռ կու գայ : Իր շարժմունքը սովորաբար դանդաղ ու շափաւորեալ է, որուն համար Փառառոր անունը տուած են իրեն | անկտոքի ձկնորսները : Րայց իր դանդաղութեան հետ մէկտեղ՝ խարազանանման պոչը այնպիսի արագութեամբ մը կը շարժէ որ նետէ մը աւելի արագ և անվիճապ է

իր հարուածը : Եցրոր որս մը ձեռք ձգէ, մէկէն իր երկայն պոչին մէջ պըլ լելով ուժով մը խոր կը խոթէ իր ասեղը՝ ու կը մեռցնէ :

Լոյս ասեղս շատ վտանգալի է ոչ միայն կենդանեաց այլ և մարդու ալ վասն զի իր երկու կողմը եղած ատամնաձև փուշերը այնպէս շարուած են՝ որ դիւրաւ մարմնոյն մէջ կը մտնեն ու շատ դժուարաւ կ'ելլէն, պատուելով իրենց ծակած տեղը . անոր համար ձկնորսները երբ ծովու արծիւ մը բռնեն մէկէն իր ասեղս կտրելու կը նային . աս պատճառաւ քանի մը տէրութեանց մէջ արգիլուած է այս ձուկս ծախել, առանց ասեղը կտրելու :


Ունէ որ ինչուան հիմա այսչափ երկիւղալի սեպուած է այս ձկանս ասեղը, ու այնչափ զգուշութիւններ կ'ըլլուին, հապա որչափ աւելի մեծ ըմբռնած պիտի ըլլան հինք, որոնք առասպելաց ու հրաշալեաց սիրող ըլլալով խելքէ դուրս բաներ կը պատմեն աս ասեղին զօրութեանը վրայ : Պլինիոս, Լյիանոս իրենց գրքերը լեցուցած են աս ձկանս կարծեցեալ թունին վնասակար պատ-

մութիւններովը, որն որ աւելի վսասակար է կ'ըսեն մարդս մեսցընելու համար, քան թէ վայրենեաց թունաւորած նետերը: Այս հեղինակաց պատմածին նայելով՝ այս ասեղս պողպատէ մը աւելի ուժով կը մոնէ մարմնոց մէջ, ու ամենէն սաստիկ թունէն աւելի երագ կ'ազդէ, և թէ ասեղը երկայն ատեն իր թունաբեր զօրութիւնը կը պահէ, թէ և կենդանւոյն մարմնէն բաժնուի: բայց ասոնք ամէնքն ալ պարզ երեակայութեան ծնունդ են: Այսոնցմէ զատ մտքերնին դրած էին որ պարզ քսուելով ալ ամենէն ուժով կենդանին կրնայ մեսցընել, ինչպէս ամենառողջ բոյս մը կամ ամենասեծ ծառ մ'ալ կը չորնայ կ'ըսէին ասոր դըպ չելով: Հին ատեն կախարդութեան զէնք մը կը սեպուէր այս ասեղս, ինչպէս որ Կիրկէ կախարդուհին իր բարեկամացը կու տար ասոնցմէ, որ իրենց թշնամեացը կարենան յաղթել: Արդեօք ինչ բաներ պիտի չպատմէին Քոյնք բոժոժաւոր օձին ակռաներուն

վրայ, թէ որ Կմերիկա իրենց ժամանակը գտնուած ըլլար:

Ո՞ւնք աւելաբանութիւնները մէկդի թողով՝ կրնանք ըսել թէ ծովու արծիւը վտանգաւոր ձկներէն մէկն է իր մեծութեամբը, ուժովը, ատամնածեասեղին համար, որ ինչպէս ըսինք՝ սաստիկ կը խայթէ ու կը վիրաւորէ. ասպատճառաւ ամէնտեսակ հետեւանքներէ ազատ ըլլալու համար ամենէն աղէկն է ծովու արծուոյն հարուածներէն զգուշանալը:

Այս վտանգալի ձուկս ուրիշ կողմանէ ալ մեծ օգուտ մը չունի, բաց ՚ի իր լերդէն, որուն մէջէն համեղ նիւթ մը կ'ելլայ և առատ եղ: Իսկ միսը պինդէ, անհամ ու գարշելի հոտ մ'ալ ունի, ուտելու անախորժ է ու դժուարամարս: Ուէ որ պղտիկ ըլլայ, աղքատները աժնութեր համար կ'ուտեն. բայց հռովմայ վաճառանոցներուն մէջ արգիլուածէ՝ որ մի և նոյն մարդուն երկու լիպրէէն աւելի չծախուի. իսկ եփելու ատենը կը նային որ հոտը սոխով վերցընեն:



Բաստընակ: — Բազմապիսի տափարակ ձկանց տեսակէն է նաև գաղղիարէն Բասդընակ ըսուածն ալ որ հագիւթէ 12 կամ 15 լիպրէ կը կշռէ: Իր վրան թեթև մը ուռած է, իսկ փորուն

տակը շիտակ է բոլորովին ու եղերքները բարակ: Լաշին կպչուն, շիտակ ու թեփով պատած է ու փորուն վրայ ալ աղտոտ ձերմակ է. իսկ ուսին վրայ մութգեղին է որ քանի որ պղտին կը մօտենայ-

աւելի կապուտի կը զարնէ . աշուշները
մեծ ու անմիջապես գլխուն վրայ են ,
աչքին բոլորը ոսկեգոյն է , իսկ բիբերը
սե . աառնց ետևը երկու խոր տեղեր կան
որոնք իրեն ականջներն են . բերանը
սրածայր է , ակռաները պօտի ու եռան .
կիւնի ձեռվ շարուած են :

Իասդընակը որ ընդհանուր իր ձեռ-
վը շատ նմանութիւն ունի ծովու ար-
ծուոյն հետ , անկէ ասով կը տարրերի
որ աւելի վտանգալի պոչ մը ունի , ինչ-
պէս պատկերը էն ալ կը տեսնուի : Հինք
առ հասարակ Իասդընակին պոչն ալ
թունաւոր կը կարծէին և տեսակ տեսակ
բժշկական յատկութիւներ կու տային
անոր : Այս միայն այս նիզակաձև պո-
չին փուշը՝ փոշի ըրբած ատամնացաւի
գլխաւոր դեղ մը կը սեպուէր , այլ նոյ-
նը փտտած ակռային մօտեցընելով մէ-
կէն վար կ'ընկնի կ'ըսէին : Իոր եղած
դիտողութիւնները բոլոր ուուտ հանե-
ցին այս բաներս . միայն տգէտ ուամիկը
խել մը աւելորդապաշտութիւններ ու-
նի մինչև ցայսօր . ինչպէս Իալիֆունիոյ
վայրենիները իրը գերբնական շարա-
գործէ մը կը վախնան ասկէ . իսկ
Շաբոնք օծին խածուածքին դէմ մի
միայն ապահով գեղթափ մը կը սեպեն
ասոր պոչին փուշը : Իմերիկոյ շատ ժո-
ղովուրդներ այս հրաշալի նիզակս , իր
պնդութեանը ու կանոնաւոր ատամնա-
ձև ըլլալուն համար երկու բերնով սղո-
ցի տեղ կը գործածեն : Իասդընակին
ահաւոր զէնքն է ասիկայ , որ կը գոր-
ծածէ իր թշնամեացը հետ պատե-
րազմելու ատեն , և իր որաք բռնելու
միջոց : Իսյս երկու ձկներս ինչպէս ի-
րենց արտաքին տեսքովն իրարու նման
են , նոյնպէս ալ բնութեամբ իրարու
շատ կը նմանին :

Իասդընակը՝ ծովու արծուոյն պէս
բարեխառն ջրեր ընտրեր , այլ ընդհա-
կառակն անտարբերաբար , ինչպէս հա-
սարակածին գաղջ ջրոցը մէջ կը կենայ ,
նոյնպէս ալ սառուցեալ բեռնուաց ալեա-
ցը տակ կը բնակի : Իիջերկրականը շատ
կը յաճախէ՝ մանաւանդ ։ Յունաստանի
արշիպեղագորը : Քուք անգղիացի նա-

ւապետը ։ Որ Հոլանտայի ծովեզերքը
այնչափ բազմութեամբ հանդիպեցաւ
ասոնց , որ հոնտեղի ծովեզերքներէն
մէկուն անունը խորչ Բասդընակաց դրաւ :

Ինչպէս կարծիքները նոյնպէս ալ
ճաշակները Իասդընակի մնոյն համին
վրայ համաձայն չեն : Ոմանց ախորժաւ
համ երեցած է , իսկ ուրիշներուն ալ
ընդհակառակն պինդ , եղոտ ու անհամ .
բայց աւելի շատերը անհամ է կ'ըսէն :
Պլըն բնապատռմը , որ ժամ դարսւն
մէջերը կ'ընկնի , կ'ըսէ թէ Իարիզու
ձկնավաճառները տափարակ ձկանց մէջ
նաեւ Իասդընակն ալ կը խառնէին և
շատ ալ գնող կը գտնուէր : Իսյս ձը-
կանս լերդէն ալ շատ եղ կ'ելլէ :
Իասդընակին մէկ տեսակն է Դրէիկն ը-
սուածն ալ , որ շատ նմանութիւնը մը չունի
Իասդընակին հետ . ասոնց մէկ տե-
սակն է դարձեալ գաղղիարէն Բասդը-
նակ ուժին կամ ըէ ուժին կոչուածը , ո-
րուն էտիւշակ անուամբ անհարթ կա-
շին՝ ամաններ ու տուփեր պատելու կը
գործածուի :

Ուէ որ քննելու ըլլանք թէ ուսկից
ելած է Բասդընակ անունը՝ կը կարծուի
որ Ի անկտորցիք նմանութիւն մը գրտ-
նելով այս ձկանս պոչին ու վայրի ստեպ-
ղինին հետ , իրենց ուամկական բառուլը
Բասդընակ կոչուած ըլլան : Իսյս ձկանս
պոչը մկան պոչին հետ նմանութիւն մը
ունենալով սմանք նորին ծովու ըսէր են .
ուրիշներն ալ Ըլլէկ ծովու՝ ջղջիկի պէս
տարածուած՝ լողալու թեակներ ունե-
նալուն համար . այլք ալ դոդու՝ ծովու
ըսէր են սւնեցած մեծ աշացը համար :

Անուշանց և Մականուշանց վրայ :

Դաննդոց զբքին առաջին գլխոյն մէջ
կը կարդանք որ Ի ցտուած ստեղծագոր-
ծութիւնն աւարտելով , ամենուն ըստ
պատշաճի անուն մը դրաւ . նիւթական

1. Հնաբոլին անունին առնուած է :
2. Գլ. Ծարաւ.